

ARCHIVE COPY

Please return.



Outreach

Հրատարակութիւն Ամերիկահայոց Արեւելեան Թեմի Ազգային Առաջնորդարանի
A Publication of the Prelacy of the Armenian Apostolic Church of America

Volume XII, Number 2 — June 1989

Ս. Լուսաւորիչ Ամէնօրեայ Վարժարանի Ամալկերջի Հանդէս



Կիրակի, 25 Յունիսի յետ միջօրէին, Քուինզի մէջ տեղի ունեցաւ Նիւ Եորքի Ս. Լուսաւորիչ Ամէնօրեայ վարժարանի ամալկերջի հանդէսը, հովանաւորութեամբ՝ Թեմիս բարեխնամ Առաջնորդ՝ Բարձր Տ. Մեսրոպ Ս. Արք. Աշճեանի: Բազմահարիւր ծնողներու եւ հիւրերու ներկայութեան վկայական ստացան մանկապարտէզի, շարժօրեայի եւ ամէնօրեայի շրջանաւարտները:

Նկարին մէջ՝ Առաջնորդ սրբազան հայրը դպրոցի շրջանաւարտներուն եւ դպրոցի վարչական պատասխանատու Տիկ. Սանան Սողոմեանին հետ:



Ամալկերջի հանդէսի աւարտին, դպրոցական երգչախումբը երգեց «Մեր Հայրենիք»-ը: Նկարին մէջ երեք հրացանակիրներ յարգանքով պատուի կեցած են:

Soviet Armenian Delegation Meets With Prelacy and A.R.S. Representatives in N.Y.



A view of the delegation from Armenia with representatives of the Prelacy and the Armenian Relief Society meeting in the Vahagn and Hasmig Hovnanian Hall at the Prelacy headquarters in New York.

On Saturday, May 20, an official Soviet Armenian delegation, met with representatives of the Armenian community at the Prelacy in New York to discuss reconstruction efforts in the earthquake stricken region of Armenia.

The delegation consisted of Levon Sahakian, First Vice Prime Minister of the Council of Ministers of the Armenian SSR; Karlen Dallakian, President of the Committee for Cultural Relations with Armenians Abroad; Vasili Ghazarian, Chief of Department of Foreign Economic Relations of the Council of Ministers of the Armenian SSR.

The Armenian American representatives consisted of Archbishop Mesrob Ashjian, members of the Prelacy Executive Council, members of the Board of the Armenian Relief Society of North America, and of the ARS Earthquake Committee. In addition to His Eminence, those present were Vram Yeghparian, Yervant Terzian, John Mkrtchjan, Onnig Petrossian, Arppie Charkoudian, Onnig Marashian, Penny Giragosian, Lucy Khatchaturian, Rouben Kachigian, Vatchik Khatchaturian and Kenneth Sarajian.

During the meeting, which followed a luncheon, the delegation from Soviet Armenia explained the current situation in Armenia and discussed the numerous needs facing Armenia as a result of the earthquake.

In turn, the community representatives responded that they will bring these matters to the attention of their respective

boards for further discussion and determination, with the promise that decisions will be made as soon as possible.

The officials from Armenia spent 17 days in the United States from May 16 to June 1, meeting with representatives of U.S. organizations (Armenian and non-Armenian) to explore opportunities for earthquake relief and reconstruction projects in Armenia.

During their stay the delegation attended more than two dozen meetings with groups and individuals in five cities where major fundraising and other activities related to aid to Armenia have occurred: New York, Washington, DC, Los Angeles, San Francisco, and Miami.

Among those who met with the delegation to discuss relief and reconstruction projects for Armenia, in addition to the Prelacy, were the Joint Jewish Distribution Committee, Habitat for Humanity, Project Hope, Medical Outreach For Armenians, the Armenian Catholic Community, the New York City Board of Education, the Land and Culture Organization, the Armenian General Benevolent Union, the Armenian Missionary Association of America, the Karagheusian Foundation, the National Council of Churches, the Iranian-Armenian Society, Sarkis Soghanalian of Pan Aviation, the Diocese of the Armenian Apostolic Church, the Knights of Vartan, and the Armenia Aid Board of America. The visit was sponsored by the Armenian Assembly of America.

Հանդիպում Հայրենի Կառավարութեան Ներկայացուցիչներուն Եւ Ամերիկահայ Կազմակերպութեանց Ներկայացուցիչներուն Միջեւ

Մայիս 20ի Շաբաթ օր, Նիւ Եորքի Կիլիկեան Թեմի Ազգային Առաջնորդարանին մէջ հանդիպում մը կայացաւ Պորհրդային Հայաստանի կառավարութեան պատուիրակութեան անդամներուն եւ ամերիկահայ կազմակերպութիւններու պատասխանատու մարմիններու ներկայացուցիչներուն միջեւ,

Հայաստանի երկրաշարժին հետեանքով ստեղծուած իրավիճակը քննարկելու, եւ առ այդ վերականգնման աշխատանքներուն շուրջ կարծիքներ փոխանակելու:

Հայրենի կառավարութեան կողմէ հանդիպումին ներկայ էին Պորհրդային Հայաստանի վարչապետի առաջին տեղակալ Լեւոն Սահակեան, Սփիւռքա-

Editorial

Building...

Train up a child in the way he should go: and when he is old, he will not depart from it.

Proverbs 22:6

Let the foundations thereof be strongly laid.

Ezra 6:3

As we were preparing this issue of OUTREACH we realized that, in a sense, it is dominated by two themes: Graduation and Construction.

We have reached many milestones within our community. In Montreal the Sourp Hagop Armenian School graduated its first high school class.

In New York, St. Illuminator's Armenian School graduated six 6th grade students and 12 Kindergarten students from its day school.

In New Jersey, the Hovnanian Armenian School had its first 8th grade graduation and with the approval of much-needed expansion plans that school, also, will be able to increase its service to the growing community.

The construction and expansion of our churches, two of which are seen in this issue, are indicative of our rapidly growing and vibrant community.

Congratulations to all of our graduates at all levels and from all schools around the country. Continue to excel in all of your endeavors, remembering always that you are sons and daughters of the Armenian Church and Nation.



THE BUILDER MUST GROW

We are all blind, until we see That in the human plan, Nothing is worth the making, if It does not make the man. Why build these cities glorious, If Man unbuilt goes? In vain we build the work, unless The builder also grows.

-Edwin Markham



Lutherans Help Earthquake Victim

Mrs. Karin Egavoff Luhmann, president of Branch 2871 in Wilmington, Delaware, of the Aid Association for Lutherans, presented a check in the amount of \$2,025. to 17-year-old Armenuhi Zamanian, who is undergoing rehabilitation and fitting of a prosthesis at the Philadelphia Children's Hospital.

AAL Branch 2871 organized a square dance as a fundraiser in order to help Armenuhi and her family pay the huge bills resulting from operations, treatments, rehabilitation and hospitalization.

The square dance was a great success and thanks to the Armenian community and the Lutheran congregation in Delaware, more than \$1,000 was raised. AAL's Helping Hands Program matched the proceeds up to \$1,000.

After rehabilitation, Armenuhi and her father will return to Leninakan, Armenia.



Aid Association for Lutherans present \$2,025. check to earthquake survivor Armenuhi Zamanian. From left to right: Mr. George Devletian, coordinator of earthquake committee; Mrs. Karin E. Luhmann, president of Aid Association for Lutherans, Wilmington Branch 2871; Armenuhi Zamanian with her father Albert Zamanian and Zovig Devletian, earthquake victims hospital coordinator and interpreter.

Հանդիպում՝ Ռազմիկ Դաւոյեանի եւ Հրանդ Մաթեոսեանի Հետ՝ Ազգային Առաջնորդարանի Մէջ

Հրաւերովը Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան շրջանի եւ Գանատայի Հայոց Կիլիկեան թեմի Ազգային Առաջնորդութեան եւ բարեխնամ Առաջնորդ՝ Բարձր. Տ. Մեսրոպ Ս. Արք. Աշտնի, Շաբաթ, 17 Յունիս, 1989թ. երեկոյեան ժամը 7:30-ին, Նիւ Եորքի Ազգային Առաջնորդարան ժամանեցին՝ Հայրենի մեծատաղանդ գրողներ՝ Բանաստեղծ Ռազմիկ Դաւոյեանն ու Հայաստանի թիւ 1 արձակագիր՝ Հրանդ Մաթեոսեանը իրենց տիկիններուն հետ միասին, մասնակցելու համար իրենց ի պատիւ կազմակերպուած Հանդիպում-հաւաքին, որ տեղի ունեցաւ Առաջնորդարանի Վահագն եւ Յասմիկ Յովնանեան սրահին մէջ, բազմաթիւ գրասէր եւ մշակութասէր հայորդիներու ներկայութեան:

Առաջնորդ սրբազան հայրը բացումը կատարելով սոյն ձեռնարկին, իր ողջոյնի եւ բարի գալստեան խօսքը ուղղեց հայրենի գրագէտներուն, վերագնահատելով անոնց անվերապահ ոգին, մաքուր հայրենասիրութիւնը եւ գրական մեծ վաստակը: Ապա, հրաւիրեց ամերիկահայ յայտնի գրող՝ Յակոբ Կարապետեանը, որ իր գրչեղբայրները աւելի եւս ծանօթացնէ ներկայներուն: Յակոբ Կարապետեան, իւրապատուկ ոճով ու մաքուր պարոմներով, ողջոյնի խօսք ուղղեց Ռազմիկ Դաւոյեանին եւ Հրանդ Մաթեոսեանին, գրուածքն անոնց կեանքի ու գրողի պատմութեան հանգրուանները: Իր խօսքին մէջ ըսաւ «Այդուհանդերձ, պատմական է պահը: Դաւոյեանն ու Մաթեոսեանը մեր մէջ: Կարծես միշտ էլ միասին ենք եղել, միասին մեծացել, միասին տիրել, միասին ուրախացել: Եւ, յատկանշական այն է, որ տասնամեակների դժնէ վարագոյրը ոչ մի ստուեր չի թողնել մեր ներաշխարհների վրայ...»: «Նորից ենք հանդիպում, այս անգամ Նիւ Եորքի սրտում, նորից բանաստեղծ եւ վիպասան, նորից Հայաստան եւ Սփիւռք, ամէն մէկը մի տեղից, աշխարհի չորս ծագերից ու սակայն որպէս ազգ ու հասարակ, որպէս ներկայ ու շարունակականութիւն: Եթէ երկու հոգի էլ լինենք, նորից ազգ ենք, լեզու, պատմութիւն, մէկ էլ այն իւրապատուկ երեւոյթը քաղաքակրթութեան պատմութեան մէջ որը կրչուում է հայութիւն: Համայնք բառն ու հասկացողութիւնը իրենց մէջ ինչ որ կրատրականութիւն են կրում, կարծես ինչ որ պետութեան ենթակայ գաղութի մասին է խօսքը: Մենք միշտ էլ ազգ ենք եղել ու կը մնանք»:

Յակոբ Կարապետեանի ներկայացման խօսքէն ետք, Առաջնորդ սրբազան հայրը բեմ հրաւիրեց Հրանդ Մաթեոսեանը որ իր խօսքը ուղղէ ներկայներուն: Հայրենի տաղանդաւոր արձակագիրը, առաջին հերթին շնորհակալութիւն յայտնեց սրբազան հոր այս գեղեցիկ առիթի ստեղծման առթիւ, եւ ապա ներկայներուն հրամցուց իր առաջին տպաւորութիւնները Միացեալ Նահանգներու եւ յատկապէս Ամերիկահայութեան մասին: Դառն հիւմորով պատմութիւններ ու գրուածքներ պատմեց ներկայներուն եւ ապա հրաւիրեց Ռազմիկ Դաւոյեանը որ իր խօսքը ուղղէ ներկայներուն: Ռազմիկ Դաւոյեան, հանգամանորէն անդրադարձաւ Հայաստանի յետ-երկրաշարժեան այժմու կացութեան մասին, ու փունջ մը իր գեղեցիկ բանաստեղծութիւններէն արտասանեց, խլելով ներկայներու բուն ծափահարութիւնները:

Առիթ տրուեցաւ ներկայներուն՝ զանազան հարցումներ հարցնելու գրողներուն: Եղան հետաքրքրական հարցումներ եւ տրուեցան զոհացուցիչ պատասխաններ: Ներկայները ուրախութեամբ ստորագրել տուին հեղինակներուն՝ Ռազմիկ Դաւոյեանի եւ Հրանդ Մաթեոսեանի կարգ մը գիրքերէն:

Սոյն հանդիպման առիթով, Ազգային Առաջնորդարանի Տիկնանց Միութիւնը կոչիկ հիւրասիրութիւն մը տուաւ հիւրերուն եւ ներկայներուն: Զեռնարկը վերջ գտաւ ուրախ մթնոլորտի մէջ:

Պատմական եւ հաճելի էր հանդիպումը: Ոգեշինչ եւ անկեղծ էր զրոյցը: Իսկ երեկոն՝ անմոռանալի երեկոյներէն մին:



Մեսրոպ Արքայազանը Հրանդ Մաթեոսեանի եւ Ռազմիկ Դաւոյեանի հետ միասին:

Հանդիպում՝ Հայրենի Արուեստագէտ՝ Արա Շիրազի Հետ



Արա Շիրազ կը գրուի Զօր. Արամ Գարամանուկեանի հետ:

Զորքեջաբերի, 14 Յունիս 1989-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Ազգային Առաջնորդարանի Վահագն եւ Յասմիկ Յովնանեան սրահին մէջ տեղի ունեցաւ Հանդիպում-հաւաք մը, հայրենի մեծ բանաստեղծ Յովհաննէս Շիրազի որդւոյն՝ բանդակագործ, արուեստագէտ Արա Շիրազի հետ:

Սոյն հանդիպումը կազմակերպուած էր Համազգային հայ մշակութային եւ կրթական ընկերակցութեան Նիւ Եորքի մասնաճիւղի կողմէ:

Աւելի քան 150 մշակութասէր եւ արուեստասէր հայորդիներ ներկայ էին գոյն հանդիպումին: Առաջնորդ սրբազան հայրը՝ Բարձր. Տ. Մեսրոպ Ս. Արք. Աշտնի, բարի գալուտի իր խօսքը ուղղեց հայրենի հիւրերուն եւ ներկայներուն: Ապա, Համազգայինի Նիւ Եորքի մասնաճիւղի վարչութեան Ատենայպետ՝ Զարլի Միսիրեան խօսք անելով, հրաւիրեց Դոկտ. Արա Գաբրիէլեանը, որ ներկայացնէ օրուան հիւրը: Դոկտ. Արա Գաբրիէլեան, Հակիրճ, ամփոփ գիծերու մէջ տուաւ Արա Շիրազի կենսագրութիւնը: Վեր առաւ անոր տաղանդաւոր արուեստագէտ, վարպետ քանդակագործ ըլլալու իրողութիւնը եւ յանուն Համազգայինի, շնորհակալութիւն յայտնեց Արա Շիրազին, որ ընդառաջելով Համազգայինի հրաւերին, այսօր եկած էր սոյն հանդիպման իր խօսքը ըսելու ներկայներուն: Ապա, Համազգայինի վարչութեան Ատենայպետ յանուն Համազգայինի ընտանիքին, յուշանուէր մը յանձնեց Արա Շիրազին, եւ հրաւիրեց բեմ:

Արա Շիրազ, շնորհակալութիւն յայտնեց իրեն ուղղուած խօսքերուն եւ հրաւերին համար. բացատրեց իր առաքելութեան նպատակը Միացեալ Նահանգներ. խօսեցաւ Հայաստանի նորօրեայ արուեստագէտ նկարիչներուն եւ քանդակագործներուն մասին, եւ ապա սահիկներու ցուցադրութեամբ՝ ներկայացուց հայրենի արուեստագէտներու գործերէն զանազան նմոյշներ: Ներկայներուն առիթ տրուեցաւ հարցումներ ուղղելու արուեստագէտին՝ որուն արուեստի գործերով զարդարուած էին Առաջնորդարանի սրահի պատերը, եւ ուր կ'երեւէին արձաններու, յուշարձաններու պատկերներ:

Հանդիպման աւարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

Հաճելի էր երեկոն: Արուեստագէտի եւ մշակութասէր հայորդիներու հանդիպումը՝ հոգեպարար:

OUTREACH

A monthly publication of the Armenian Apostolic Church of America

Archbishop Mesrob Ashjian, Prelate

Mardo Soghomonian Managing Editor

Iris Papazian, Editor

OUTREACH (USPS 426-490) is published monthly, except for a combined July-August issue, by the Prelacy of the Armenian Apostolic Church of America, 138 East 39th Street, New York, NY 10016, (212) 689-7810. Unsolicited manuscripts are welcome; please include a stamped, self-addressed return envelope. Signed articles do not necessarily reflect the policy of the Armenian Apostolic Church of America. Send all correspondence to the above address to the attention of the Editor. Printed in the United States of America. Second class postage paid at New York, NY 10016. Postmaster: Send address changes to OUTREACH, 138 E. 39th Street, New York, NY 10016.

A MINI LESSON

In the Armenian church the day following the five major feasts (Nativity, Easter, Transfiguration, Assumption, and Holy Cross) is Memorial Day (Merelotz). On Memorial Days Requiem Mass is said for the repose of the departed souls their graves are visited and blessed with the words "...For your sacred resurrection we have come to visit your graves, and with the life giving Holy Cross and Holy Gospel to announce the good tidings of the wonderful renewal of hope, which has been promised to us..."

ՀԻՄՆԵՐՈՒ ԶԵՏԵՂՈՒՄ ԹՈՐՈՆՏՈՅԻ ՍԲ. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ



ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄՈՒՏՔՆ ՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՃԱԿԱՏԸ

Կիրակի, 21 Մայիս, 1989-ին Թորոնթոյի մէջ կատարուեցաւ Սբ. Աստուածածին Հայց. Առք. Եկեղեցւոյ Հիմերու զետեղումը:

Առաւօտեան վաղ ժամերէն Հոգաբարձութեան, Շինարարական Ցանձնախումբի, Դպրաց Դասի եւ կանանց յանձնախումբի անդամները ժրջանորէն ժամանած են չրջանի հայ կեդրոնը եւ իւրաքանչիւրը իր պարտականութիւնը զիտակից կերպով կ'աշխատի դասուարել պարտն ու պատշաճ օրուան արարողութիւնները հեղասահ եւ տպաւորիչ ընծայելու համար:

Ժամը 11-ին առաւօտեան հակիրճ արարողութենէ մը ետք, «Պրահուրդ Սորին» շարականի երգեցողութեամբը թափորը կ'ուղղուի կեդրոնի սրահը, որ այս առիթով յատկապէս պատշաճեցուած է Ս. Պատարագի մատուցման:

Հաւատացեալներու բազմութիւնը կը լեցնէ սրահը: Բոլորի դէմքերուն վրայ կը կարդացուի խանդավառ ակնկալութիւն մը:

Օրուան պատարագիէն է Եկեղեցւոյ հոգեւոր հովիւը՝ Գերպ. Տ. Սափակ Մ. Վրդ. Յակոբեան, որ օրուան պատգամը կուտայ որպէս բնարան ունենալով Պետրոս Առաքեալի խօսքը «Եւ դուք որպէս Վէմս կենդանիս, շինէք հոգեւոր Տաճար Աստուծոյ»:

Հայր սուրբը կը շնչոյթ թէ վեց տարիներէ ի վեր Թորոնթոյի այս համայնքը կը գործէ ու կ'աճի որպէս Աստուծոյ հոգեւոր Տաճար եւ անհրաժեշտ էր, որ նախ այդ տաճարը՝ ապրող ու շնչող, առաքելութեան մը տեսիլքովը գործող տաճարը կառուցուէր: Սակայն արդէն իսկ հասած է ժամը, որ այս համայնքը ունենայ իր սեփական տունը եւ իր հոգիէն բխող աղօթքները վերառաքէ հայու վաստակով կերտուած Հայուն տաճարին մէջ:

Ս. Պատարագի աւարտին Եկեղեցական դասը ու բարերարներու եւ կնքահայրերու թափորը կ'ուղղուի եկեղեցւոյ շինութեան վայրը: Եկեղեցւոյ կնքահայրերէն իւրաքանչիւրը իր հետ կը կրէ, 1987-ի օգոստոսին, մեր սիրելի Վեհափառ Հայրապետին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի օրհնաբաշխ Աջովը օծուած հիմնաքարերէն մէկը:

Հաւատացելոց բազմութիւնը կը խոնուի եկեղեցաշինութեան համար փորուած տարածութեան շուրջը: Եկեղեցւոյ սիւներու եւ Ս. Սեղանի հիմերու կնքահայրերը կ'ուղղեն իրենց յատուկ վայրերը եւ օրհնութիւն աղօթքէ մը ետք հիմերը կը զետեղեն իրենց պատշաճ վայրերը:


Յուզումնալից եւ անմոռանալի վարկեան մըն էր բոլոր ներկաներուն համար, յատկապէս այն պահը երբ ժամանակի պահպանակին մէջ կը զետեղուէին Հ.Օ.Մ. Գոլդեան Պապայեան Վարժարանի աշակերտութեան կողմէ Մայր Հայրենիքի զանազան շրջաններէն՝ Սոր Վիրապէն, Ս. Էջմիածնէն, Սարտարապատէն ու Լարաբլիխէն բերուած հողն ու քարը, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Սոսյ Մայր Տաճար Ս. Սոֆիա Եկեղեցւոյ պատկերն ու Գաղութիս յիշատակարանը, սփիւռքի այս հեռաւոր ասիւններուն ու հայրենակարօտ հոգիներու աղօթքներուն միաշաղախելով քիչ մը հայրենիք ու պատմութիւն, միանգամայն հեռաւոր ապագաներուն եւ գալիք սերունդներուն համար արժանանցելի վկայութիւն մը հայու յաւերժական ու ստեղծագործ ոգիին մասին:

Եկեղեցական արարողութեանց աւարտին բոլոր ներկաները հիւրասիրուեցան եկեղեցւոյ կանանց յանձնախումբին կողմէ:



Members of the choir and faithful parishioners of the St. Asdvadzadzin Church in Toronto proceed to the location of their new church for the blessing of the church's foundation. Construction of the new edifice began last April and is expected to be completed at the end of December 1989. The architect, Mr. Roderick Robbie, has created a church using the features of Armenian architecture with the use of modern construction materials and techniques. (See artists rendering above). The community hopes to celebrate Christmas—January 6, 1990—in their new and magnificent house of worship.

Construction of New York's St. Sarkis Church Progresses; Completion Due Early in 1990



Photos by Kantzabed

As these photographs show, construction of the new St. Sarkis Church is progressing during the summer months with the framework nearly complete. Construction of the church began last October and is expected to be completed by January or February of 1990 with the consecration of the church scheduled for May 1990. The site of the church, Douglaston, N.Y., was chosen following the fire that destroyed the St. Sarkis Church in Bayside, New York. The new location is larger and easily accessible for the growing Armenian population in that area of Long Island. The Building Committee which has been actively involved in various fundraising projects, is planning a major direct mail campaign in September. In the photo directly above members of the Building Committee inspect the progress. From left to right: Mr. Bedros Jivelikian, Mr. Jack Chadrijan, and Mr. Diran Donikian and an unidentified guest.

A MINI LESSON

Although the apple is traditionally considered to be the fruit from the tree of knowledge in the Garden of Eden, it is never mentioned by name. The apple (*pyrus malus*) may not have been originally native to the Levant although it grows commonly there now. Consequently, many specialists agree that the "apples of gold" in Prov. 25:11 were apricots (*prunus armeniaca*) trees that provide both abundant shade and golden fruit, sweet and refreshing to the taste (Song of Solomon 2:3,5).

